

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2021Թ.-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առողջապահության բնագավառ

Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար 2021 թվականին հատկացվել 845.9 մլն. դրամ գումար: Իրականացվել է 111642.8 հազ. դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 24172.1 հազ. դրամով:

2021 թ.-ի ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել է 266 ծնունդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7-ով:

Պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 54 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 48, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 12 երեխա իրենց խնամակալների հետ:

Բժշկական կազմակերպություններում աշխատում են 395 բուժաշխատողներ:

Եղեգնաձորի ԲԿ-ում վերանորոգվել է ռենտգեն կաբինետը, ձեռք է բերվել նոր ռենտգեն ապարատ ՅՈՒՆԻՍԵՖ կազմակերպության աջակցությամբ:

Ս/թ. հունվարից Եղեգնաձորի ԲԿ-ում գործում է Վահագն Ազլամիշյանի անվ. մարզային ակնաբուժական կենտրոնը (Հիմնադիր՝ ՀՀայկական ակնաբուժության նախագիծ> բարեգործական հիմնադրամ): Իրականացվել է 234 վիրահատություն:

Մարզում ապրիլ ամսվանից իրականացվում է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը: Պատվաստումների գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար իրականացվում են հանրային իրազեկման աշխատանքներ, որոնց լիարժեք կազմակերպելու նպատակով ստեղծվել է մարզպետին կից հանձնաժողով:

30.12.2021թ. դրությամբ կատարվել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ 28315 պատվաստում, որից 16111 առաջին դեղաչափ, երկրորդ դեղաչափ՝ 12204, խթանիչ՝ 3: Մարզում պատվաստումները պլանավորվում և կատարվում են բժշկական կազմակերպությունների ֆիքսված կետերում: Պատվաստումներ իրականացվում են նաև արտագնաշարժական բրիգադաներով: Անհրաժեշտության դեպքում ԲԿ-ները աշխատում են 2 կետով:

ՀՀ ԱՆ <Այրվածքաբանության ազգային կենտրոն> ՓԲԸ-ի կողմից <Ջերմուկի ԱԿ> ՓԲԸ-ին հատկացվել է թվով մեկ <Տոյոտա Լենդ Բրաուզեր> մակնիշի շտապ օգնության մեքենա:

Մի շարք կազմակերպությունների՝ <Լե Լաբոդատուադ Սդվիե> ՍԱՍ ընկերության հայաստանյան ներկայացուցչության <ՆՈՐԴ> բիզնես կենտրոնի, UNICEF միջազգային կազմակերպության և Փարիզի՝ Եվրոպական Ժորժ Պոմպիդու հիվանդանոցի սիրտ-անոթային վիրաբույժ Լևոն Խաչատրյանի նախաձեռնությամբ ու <Ֆրանսիական Լույս> ասոցացիայի աջակցությամբ, Վայոց ձորի մարզպետարանին անհատույց (որպես օգնություն), տրամադրվել են բժշկական նշանակության պարագաներ և դեղորայք, որոնք բաշխվել են մարզի բժշկական կազմակերպություններին ըստ անհրաժեշտության:

Առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետ՝

Վ.Ասլանյան

30.12.2021թ.